Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովին
Նախագահ՝ պարոն Ալեն Սիմոնյան

Հասցե՝
Հայաստանի Հանրապետություն, ք. Երեւան, 0095
Մարշալ Բաղրամյան 19
webmaster@parliament.am
Տեղեկատու հեռախոս՝ 011 51-36-22
010 58-85-51

13.09.2023թ.

ԿՈԼԵԿՏԻՎ ՀԱՆՐԱԳԻՐ

Գործող կարգավորումների կատարելագործման

(ՀՀ Հարկային օրենսգրքի 416-րդ հոդվածում փոփոխություն կատարելու) ***վերաբերյալ***

Հարգելի պարոն Սիմոնյան,

Սույն հանրագիրը ներկայացնողներն հանդիսանում են առևտրային գործունեություն իրականացնող խոշոր ընկերություններ, որոնք ունեն բազմաթիվ առևտրի օբյեկտներ, որտեղ առկա են հսկիչ դրամարկղային մեքենաներ:

ՀՀ Հարկային օրենսգրքի 416-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝

Հոդված 416. Հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառության և (կամ) հսկիչ դրամարկղային մեքենաների միջոցով դրամական հաշվարկների կանոնները չպահպանելը

2. Հսկիչ դրամարկղային մեքենաների **կիրառության կանոնների** (բացառությամբ սույն հոդվածի 4-րդ մասում նշված դեպքի) **խախտման համար կազմակերպությունը**, անհատ ձեռնարկատերը կամ նոտարը **տուգանվում է 200 հազար դրամի և տվյալ հարկ վճարողի <u>բոլոր հսկիչ դրամարկղային մեքենաներով</u> նախորդ եռամսյակի ընթացքում արձանագրված շրջանառության 0.5 տոկոսի գումարի հանրագումարի չափով, բայց ոչ ավելի, քան 10 միլիոն դրամը:**

ՀՀ Հարկային օրենսգրքի 416-րդ հոդվածի 2-րդ մասում տուգանքի չափի վերոնշյալ աննախադեպ մեծացումը կատարվել է 2022թ.-ին: Սույն հանրագրով առաջարկում է փոփոխություններ կատարել ՀՀ Հարկային օրենսգրքի 416-րդ հոդվածի 2-րդ մասում, ինչի արդյունքում տվյալ հոդվածով սահմանված **տուգանքի հնարավոր չափը կնվազեցվի**, ինչպես նաև կսահմանվեն **պատասխանատվության չափը մեղմացնող տարբեր գործոններ** (արարքի ծանրություն, հանրային վտանգավորության աստիճան, պատճառված վնասի չափ, մեղքի աստիճան և այլ էական հանգամանքներ), որոնց արդյունքում պատասխանատվությունն առավել համաչափ կդառնա ...

Հիմնավորում

Ներկայումս ՀՀ Պետական եկամուտների կոմիտեի կողմից տարբեր տնտեսավարող սուբյեկտների մոտ հանձնարարագրերի հիման վրա հարուցվում են վարչական վարույթներ (հարկային հսկողության /ուսումնասիրության/ վարույթներ) ***տնտեսավարող սուբյեկտների մոտ հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառության և (կամ) հսկիչ դրամարկղային***

մեքենաների միջոցով դրամական հաշվարկների համար սահմանված կարգերի ու կանոնների պահանջների պահպանումն ուսումնասիրելու նպատակով:

Նշված հարկային հսկողությունների (ուսումնասիրությունների) շրջանակներում պատահում են դեպքեր, երբ ընկերությունների աշխատակիցների կողմից վաճառվող ապրանքի կամ ապրանքների գրանցումը ՀԴՄ-ով չի իրականացվում՝ **ոչ ընկերության (Գործատուի) հանձնարարությամբ կամ ցուցումով:**

Այնուհետև տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ վերոնշյալ ուսումնասիրությունների (հսկիչ գնման) արդյունքներով կազմվում են վարչական ակտի նախագծեր (անվանումը՝ Արձանագրության նախագիծ), որոնցով առաջադրվում են մինչև 10,000,000 ՀՀ դրամի չափով տուգանքներ, եթե հարկ վճարողի շրջանառությունն խոշոր է: Իսկ վարչական ակտի նախագծից հետո համապատասխանաբար ՀՀ ՊԵԿ-ի կողմից կազմվում են վարչական ակտեր (օրենսգրքում անվանումը՝ Արձանագրություն), որոնցով տնտեսվարող սուբյեկտների ՀՀ Հարկային օրենսգրքի 416-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն **առաջադրվում են 10,000,000 ՀՀ դրամի չափով տուգանքներ:**

Այսպիսի դեպքերում տնտեսվարող սուբյեկտները կանգնում են այնպիսի ռիսկերի առջև, երբ վերջիններիս **սպառնում է 10,000,000 ՀՀ դրամի չափով տուգանքի առաջադրում** այն պայմաններում, երբ ընկերություններն որևէ կերպ ՀԴՄ-ով վաճառվող ապրանքները ՀԴՄ-ներով չգրանցելու և հարկեր չվճարելու որևէ միտում երբեք չեն ունեցել և չունեն: Ստացվում է, որ առկա օրենսդրական կարգավորումների պայմաններում **խոշոր ընկերությունների դեպքում**, որոնց շրջանառությունը մեծ է, մեկ աշխատակցի մեկ անգամ ՀԴՄ կտրոն չտրամադրելու գործողության արդյունքում ընկերություններն ինքնաբերաբար հայտնվում են 10,000,000 ՀՀ դրամ տուգանք վճարելու փաստի առջև: Կարծում ենք, որ նման մոտեցումն անթույլատրելի է և հաշվի չի առնում իրավակիրառ պրակտիկայում ծագող նման դեպքերը:

2022թ.-ին կատարված համապատասխան փոփոխությունների ընթացքում չեն նախատեսվել այնպիսի դեպքեր, երբ վաճառված ապրանքի ՀԴՄ-ով չգրանցելը տեղի է ունենում ոչ հարկատուի դիտավորյալ գործողությունների հետևանքով (մեղքով) և փաստացի որևէ հանրային վտանգավորության աստիճան չի ունենում:

ՀՀ Սահմանադրական դատարանն իր 16.11.2010թ.-ի ՍԴՈ-924 որոշմամբ անդրադարձել է իրավաբանական (վարչական) պատասխանատվության կիրառման ժամանակ համաչափության սկզբունքի կիրառմանը և եզրահանգել է հետևյալը.

*«7. Իրավաբանական պատասխանատվության հիմքում **<u>ընկած</u> համաչափության սահմանադրական սկզբունքը պահանջում է նաև, որ սահմանված պատասխանատվության չափը լինի տարբերակված**՝ ելնելով կատարված **արարքի ծանրությունից, հանրային վտանգավորության աստիճանից, պատճառված վնասից, <u>մեղքի աստիճանից</u>** և **այլ էական հանգամանքներից**: Ըստ այդմ, օրենսդրից պահանջվում է սահմանել պատասխանատվության այնպիսի իրավակարգավորում, որը պատասխանատվության ենթարկող իրավասու մարմնին հնարավորություն ընձեռի որոշելու նշանակվող պատասխանատվության կոնկրետ չափը՝ ելնելով զանցանքի բնույթից և լրջությունից:»*

ՀՀ Սահմանադրական դատարանը նման դիրքորոշում է հայտնել նաև իր մեկ այլ՝ 20.09.2016թ.-ին կայացված թիվ ՍԴՈ-1304 որոշման մեջ՝ *Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 180.1-րդ հոդվածի 15-րդ մասի՝ ՀՀ սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով:*

Բացի այդ՝ 2022թ.-ին ՀՀ Հարկային օրենսգրքում կատարված վերոնշյալ փոփոխությունների ժամանակ **չի ներկայացվել նաև հիմնավորում, թե ինչու՞ է, որպես տուգանքի առավելագույն, սահմանաչափ ընտրվել հենց 10,000,000 ՀՀ դրամը**: Ո՞րն է նշված գումարի չափի սահմանման տրամաբանությունը: Եթե նախագիծը մշակողները նպատակ են ունեցել կատարել տուգանքի չափի որոշակի զսպում այն դեպքերերի համար, երբ հարկատուի շրջանառության չափը շատ բարձր է և

ՀԴՄ-ներով նախորդ եռամսյակի ընթացքում արձանագրված շրջանառության 0.5 տոկոսի գումարի հանրագումարը **կարող է լինել շատ մեծ**, ապա ստացվում է, որ վերջիններս բոլոր դեպքերում համարել են, որ անհրաժեշտ է հաշվի առնել նաև համաչափության սկզբունքը և այնուամենայնիվ սահմանել որոշակի սահմանաչափ: Սակայն տվյալ պարագայում **պարզ չէ, թե ի՞նչ տրամաբանություն է դրվել տուգանքի նման խոշոր սահմանաչափ սահմանելիս**: Փաստորեն ստացվում է, որ նախկինում գործող՝ մեկ տարվա ընթացքում առաջին անգամ արձանագրված ՀԴՄ կանոնների խախտման դեպքի համար տուգանքի չափի (150,000 ՀՀ դրամի) փոխարեն ներկայումս խոշոր տնտեսավարողների մոտ տուգանքի չափը խախտման առաջին անգամի համար միանգամից բարձրացվել է մինչև 66 անգամ (10,000,000 ՀՀ դրամ): Կարծում ենք, որ ողջամիտ կլիներ բարձրացումն իրականացնել ավելի քիչ չափով:

Ընդ որում՝ ՀՀ Հարկային օրենսգրքում վերոնշյալ փոփոխությունների նախագծի 27.12.2021թ.-ի հիմնավորման մեջ ևս առկա չէ որևէ համապատասխան հիմնավորում (փաստարկ):

Ավելորդ չենք համարում մեջբերել իրավագիտության մեջ առկա որոշ մոտեցումներ իրավախախտումների կանխման և պատիժների վերաբերյալ. ըստ 18-րդ դարի իտալացի անվանի իրավագետ, փիլիսոփա Չեզարե Բեկարիայի (Cesare Beccaria Bonesana, 1738-1794) ***հանցագործությունը կանխում է պատժի <u>անխուսափելիությունը</u>, ոչ թե՝ խստությունը,***[1]

Չնայած, որ տվյալ դեպքում քննարկման առարկա է *հարկային իրավախախտումը*, որն իրենից ներկայացնում է ոչ թե հանցագործություն, այլ՝ **վարչական իրավախախտման տեսակ է**, սակայն մեջբերված թեզիսի տրամաբանությունը կարող է կիրառելի լինել նաև սույն դեպքում՝ որպես իրավախախտումները կանխելու հիմնարար սկզբունք: Ենթադրաբար ՀՀ Հարկային օրենսգրքի 416-րդ հոդվածի 2-րդ մասում 2022թ.-ին կատարված փոփոխությունը միտված է եղել **պատասխանատվության չափի գերխստացման միջոցով կանխել հարկային համապատասխան իրավախախտումները**՝ վաճառված ապրանքները ՀԴՄ-ներով չգրանցելու միջոցով պետությանը հարկեր վճարելուց խուսափելը: Սակայն կարծում ենք, որ միայն պատասխանատվության չափի բարձրացման վրա կատարված շեշտադրումն արդյունավետ չէ տվյալ դեպքում և չի ապահովելու ցանկալի արդյունք՝ առանց անհարկի վնասելու տնտեսավարող սուբյեկտներին:

Չեզարե Բեկարիայի արտահայտած մեկ այլ հիմնարար տեսակետ է նաև, որ ***պատիժը պետք է համապատասխանի հանցագործությանը:***

Այսինքն նշանակվող պատասխանատվության միջոցը պետք է լինի համաչափ կատարված իրավախախտմանը ...

Վերևում մեջբերված հոդվածով նկարագրված արարքը հանդիսանում է հարկային իրավախախտում: Կարծում ենք, որ տվյալ նորմով նախատեսված պատասխանատվության չափն, ըստ էության, խիստ բարձր է: Առանձին դեպքերում՝ երբ տնտեսվարողը խոշոր հարկատու է, ունի խոշոր շրջանառություն և բազմաթիվ գործող ՀԴՄ-ներ, վերջինս կարող է միայն մեկ հասցեում ՀԴՄ կտրոն չտրամադրելու փաստով կրել **խոշոր չափի տուգանք** և անհարկի զրկվել իր սեփականությունից (իր դրամական միջոցներից):

ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

Հոդված 5. Իրավական նորմերի աստիճանակարգությունը

1. **Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ:**

ՀՀ Սահմանադրության 78-րդ հոդվածի համաձայն՝

---

1 Տես հեղինակի «Հանցագործությունների և պատիժների մասին» հանրահայտ աշխատությունը (1764թ., իտալերեն՝ «Dei delitti e delle pene», ռուսերեն՝ «О преступлениях и наказаниях»)

Հոդված 78. Համաչափության սկզբունքը

Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է **պիտանի և անհրաժեշտ լինեն** Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները **պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը**:

ՀՀ Սահմանադրության 74-րդ հոդվածի համաձայն՝

Հիմնական իրավունքները և ազատությունները **տարածվում են նաև իրավաբանական անձանց վրա** այնքանով, որքանով այդ իրավունքները և ազատություններն իրենց էությամբ կիրառելի են դրանց նկատմամբ:

Միաժամանակ ՀՀ Սահմանադրության 11-րդ հոդվածի համաձայն՝

Հոդված 11. Տնտեսական կարգը

Հայաստանի Հանրապետության տնտեսական կարգի հիմքը սոցիալական շուկայական տնտեսությունն է, որը հիմնված է **մասնավոր սեփականության, տնտեսական գործունեության ազատության, ազատ տնտեսական մրցակցության վրա** և պետական քաղաքականության միջոցով ուղղված է **ընդհանուր տնտեսական բարեկեցությանը** և սոցիալական արդարությանը:

ՀՀ Սահմանադրության 59-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

Հոդված 59. Տնտեսական գործունեության ազատությունը և տնտեսական մրցակցության երաշխավորումը

1. **Յուրաքանչյուր ոք ունի տնտեսական, ներառյալ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունք**: Այս իրավունքի իրականացման պայմանները և կարգը սահմանվում են օրենքով:

ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝

Հոդված 86. Պետության քաղաքականության հիմնական նպատակները

Տնտեսական, սոցիալական և մշակութային **ոլորտներում** <u>**պետության**</u> **քաղաքականության հիմնական նպատակներն են՝**

1) գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանումը.

Կարծում ենք, որ ՀՀ Հարկային օրենսգրքի 416-րդ հոդվածի 2-րդ մասում 2022թ.-ին կատարված վերոնշյալ փոփոխությունը խիստ միակողմանի է, նաև **չի նպաստում** Հայաստանի Հանրապետության տարածքում գործարար միջավայրի բարելավմանը, ձեռնարկատիրության խթանմանը և, ըստ էության, հակասում է տնտեսական ոլորտում պետության քաղաքականությանը:

«Հանրագրերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի 1-3 կետերի համաձայն՝

Հոդված 1. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

1. Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

1) **հանրագիր՝** Սահմանադրության 53-րդ հոդվածի հիման վրա հանրային նշանակություն ունեցող հարցերով ներկայացվող գրություն կամ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց գործունեության թերությունների մասին հաղորդում կամ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց գործունեության բարելավման, տնտեսական, քաղաքական, սոցիալական և հասարակական կյանքի այլ ոլորտների վերաբերող հարցերի կարգավորման կամ **գործող իրավակարգավորումների կատարելագործման վերաբերյալ առաջարկություն**.

2) **անհատական հանրագիր՝** հանրագիր, որը ներկայացրել է մեկ անձ.

3) **կոլեկտիվ հանրագիր՝** հանրագիր, որը **ներկայացրել են երկու և ավելի անձինք միևնույն հարցով,** իսկ հանրագրերի միասնական էլեկտրոնային հարթակում ներկայացնելու դեպքում՝ հանրագիր, որին միացել են մեկ և ավելի անձինք, որտեղ հանրագիր նախաձեռնած անձը

համարվում է գլխավոր նախաձեռնող, իսկ նույն հանրագրին միացած անձինք՝ հանրագրի աջակիցներ.

«Ազգային Ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի 123.1.-րդ հոդվածի 1-6 մասերի համաձայն՝

Հոդված 123.1. Ազգային ժողով ներկայացված հանրագրերը քննարկելու և դրանց պատասխանելու կարգը

1. Հանրագրերն Ազգային ժողով կարող են ներկայացվել միայն Ազգային ժողովի իրավասության մեջ մտնող հարցերի վերաբերյալ:

2. **Հանրագիրը ներկայացվում է Ազգային ժողովի նախագահին ուղղված գրությամբ**: Եթե գրությունը սույն հոդվածի 1-ին մասի կամ «Հանրագրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պահանջներին՝

1) չի համապատասխանում և հինգ աշխատանքային օրվա ընթացքում դրանց չի համապատասխանեցվում, ապա Աշխատակազմը վերադարձնում է գրությունը՝ նշելով պատճառների մասին, իսկ «Հանրագրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված մերժման հիմքերի առկայության դեպքում մերժում է հանրագրի քննարկումը.

2) համապատասխանում է, ապա Ազգային ժողովի նախագահը հանրագիրն ուղարկում է իրավասու մշտական հանձնաժողով կամ հանձնաժողովներ, եթե հանրագիրը վերաբերում է մեկից ավելի մշտական հանձնաժողովների իրավասության ոլորտներին:

3. **Աշխատակազմը գրանցում է մշտական հանձնաժողով ուղարկված հանրագիրը և այն տեղադրում է Ազգային ժողովի պաշտոնական ինտերնետային կայքում:**

4. Մշտական հանձնաժողովի նախագահը հանրագիրն ստանալուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, հանրագիրն ուղարկում է հանձնաժողովի անդամներին, որոնք կարող են հանրագիրն ստանալուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում, ներկայացնել հանրագրի պատասխանի նախագիծ: Եթե սահմանված ժամկետում հանրագրի պատասխանի նախագիծ չի ներկայացվում, ապա հանրագրի պատասխանի նախագիծը մեկ շաբաթվա ընթացքում մշակում և հանձնաժողովի քննարկմանն է ներկայացնում հանձնաժողովի նախագահը: Հանձնաժողովի նախագահը կարող է հանրագրի պատասխանի նախագիծ մշակել նաև հանձնաժողովի այլ անդամի կողմից հանրագրի պատասխանի նախագիծ ներկայացվելու դեպքում:

5. **Հանձնաժողովի նիստում հանրագրի պատասխանի նախագիծը քննարկվում է ընդհանուր կարգով:** Եթե ներկայացվել են մեկից ավելի նախագծեր, ապա դրանք քննարկվում են Կանոնակարգի 112-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան: Եթե հանրագրի պատասխանի վերաբերյալ հանձնաժողովը որոշում չի կայացնում, ապա հարցի քննարկումը համարվում է ավարտված:

6. Հանձնաժողովի նախագահը հանձնաժողովի որոշմամբ հաստատված հանրագրի պատասխանը, իսկ պատասխանի վերաբերյալ որոշում չկայացվելու դեպքում համապատասխան գրությունը երկու աշխատանքային օրվա ընթացքում ուղարկում է Աշխատակազմ, որն այն ստանալուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, ուղարկում է անհատական հանրագիրը ներկայացրած անձին կամ կոլեկտիվ հանրագրում որպես պատասխանատու նշված անձին: Հանրագրի պատասխանը տեղադրվում է Ազգային ժողովի պաշտոնական ինտերնետային կայքում:

Նկատի ունենալով վերոնշյալ հանգամանքները և «Հանրագրերի մասին» ՀՀ օրենքի կարգավորումները՝

Առաջարկում ենք

Ընդունել ՀՀ Հարկային օրենսգրքի 416-րդ հոդվածում փոփոխություններ կատարելու մասին օրենք, ինչի արդյունքում՝

1. Նշված նորմում բոլոր հսկիչ դրամարկղային մեքենաների փոխարեն կնշվի ***բացառապես տվյալ օբյեկտում*** *առկա հսկիչ դրամարկղային մեքենայի նախորդ եռամսյակում արձանագրած*

շրջանառության մասին, ինչպես նաև կսահմանվեն պատասխանատվության չափի անհատականացման իրավական մեխանիզմներ:

Տվյալ փոփոխության արդյունքում ՀՀ Հարկային օրենսգրքի 416-րդ հոդվածի 2-րդ մասը կունենա հետևյալ խմբագրությունը.

Հոդված 416. Հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառության և (կամ) հսկիչ դրամարկղային մեքենաների միջոցով դրամական հաշվարկների կանոնները չպահպանելը

2. Հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառության կանոնների (բացառությամբ սույն հոդվածի 4-րդ մասում նշված դեպքի) խախտման համար կազմակերպությունը, անհատ ձեռնարկատերը կամ նոտարը տուգանվում է 200 հազար դրամի և տվյալ հարկ վճարողի ***տվյալ հասցեում*** *բոլոր հսկիչ դրամարկղային մեքենաներով* նախորդ եռամսյակի ընթացքում արձանագրված շրջանառության *մինչև* 0.5 տոկոսի գումարի հանրագումարի չափով, բայց ոչ ավելի, քան 10 միլիոն դրամը:

Պատասխանատվության չափը որոշելիս հարկային մարմինը հաշվի է առնում արարքի ծանրությունը, հանրային վտանգավորության աստիճանը, խախտում կատարած անձի մեղքի աստիճանը, պատճառված մնասի աստիճանը և այլ էական հանգամանքներ:

2. ՀՀ Հարկային օրենսգրքի 416-րդ հոդվածով նախատեսված իրավախախտման համար հնարավոր կլինի պատասխանատվության ենթարկել նաև անհատապես այն ֆիզիկական անձին, որը չի գրանցել վաճառվող ապրանքը հսկիչ դրամարկղային մեքենաներով:

3. ՀՀ Հարկային օրենսգրքի 416-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված տուգանքի առավելագույն չափը (մինչև 10,000,000 ՀՀ դրամ) էականորեն նվազեցվի:

Հարգանքով՝

Պատասխանատու անձ՝
«ԱԼՖԱ-ՖԱՐՄ» ՓԲԸ

_____
Միքայել Մացակյան
Գլխավոր տնօրեն

Քաղաք Երևան, Շիրակի
փողոց 1/68
alfapharm@alfapharm.am
Հեռ.՝ 011 700500

«ԱՐԳՈ-ՖԱՐՄ» ՍՊԸ

_____
Արմեն Տիգրանյան
տնօրեն

Երևան, 0004, Ծովակալ Իսակովի
պողոտա, 50/3 շենք
argo@argopharm.am
011-744080

«ԳԵԴԵՈՆ ՌԻԽՏԵՐ» ՍՊԸ _____

Արամ Աղվանյան
Տնօրեն

Երևան, 0028, Օրբելի եղբայրների
փողոց, 14 շենք
online@rg-pharm.am
011 818181

«ԷՍԿՈՒԼԱՊ» ՍՊԸ _____

Գագիկ Գրիգորյան
Տնօրեն

Երևան, 0054, Դավթաշեն,
1-ին թաղամաս, 17/2 շենք
esculap@esculap.am
011-37-04-04

«ՆԱՏԱԼԻ ՖԱՐՄ» ՍՊԸ _____

Արման Ասատրյան
դեղատնային ցանցի տնօրեն

Երևան, Տիչինայի փողոց,
3-րդ նրբանցք, 2/2 շենք
info@natalipharm.am
010- 72-91-73

«ՖԱՐՄԴՈՄ» ՍՊԸ
(«ԱՍՏԵՐԻԱ» ԴԵՂԱՏՆԵՐԻ ՑԱՆՑ)

_____

Վահրամ Կարապետյան
Տնօրեն

Երեւան, Նաիրի Զարյան 72/3
support@asteria.am
011 51-90-70

«ՏՈՆՈՒՍ-ԼԵՍ ՌԵՄԵԴԻ» ՍՊԸ _____

Լիաննա Կիրակոսյան
Տնօրեն

Երևան, 0037, Վարշավյան փողոց 2/1
info@tonusles.am
060-48-00-76